

ՀԱՄԵԼՈՑՏՈՒԹԻՒՆ ԺՆՆԻՆԸՆ ԵՒ ԳԻՊՈՒՆՆՈՑ  
ՄԵՆՈՒԷԼ ՇԵՆՈՆԵԸՆ ԿԻՄԻՇԻՍԸՆԸՑԻ ՊԵՏՄԵՐԸՆԻՍ  
1835 Ի ՍՈՒՐԲ ԽԸԶ ՎԸՆՍ ՂՐԻՄՈՑ. \*)

Զուսն եւ գիարդն Մուր դպրի

Մնեալ եւ սնեալ սորա ի Զմիւռնիայ քաղաքի ծովեզրեայ, ի Յանիայ գաւառի փոքուն Ասիոյ, որոշելոյն ի Կիլիայ գաւառի յիշեալ Զմիւռն կամ Սմիռայ եւ կամ Միոնիայ, Արդի առն քաղաքաշարի եւ քաղաքաւազ վաճառական Գրիգորի որոյ Հաւ հայրն անուանելով եւ Մուր, Այս Շնորհազարդ թոռն՝ յանուն Հաւոյն իւրոյ՝ թուի թէ ազգեցութեամբ երկնի վերակոչի Մուր, Զի թէ Մուրն Բեթլեհէմի ըստ պատահման զԷմմանուէլն կրէր ի ծոցի, բայց Մուրս այս ի քսաներեքամեայ հրաբորբոք հասակի իբր հարիւրամենի ոմն պարկեշտ երկիւղածութեամբ հանապազ գծիսուս Օծեալն կրէր ի սիրտ եւ ի հոգի իւր, վայելչագեղ հեղ, հանգարդ եւ լսիկ, ըստ օրինակի Մովսիսեան օձի, միայն զպատկեր նարդի մարդկանցս զգեցեալ, բայց սանձահարեալ զկիրս ըմբոսաբնութեան ողջախոնութեամբ իբր այլ՝ այլասեռ մարդ չընէր յաշխարհի:

Մուսնգ առաքինաւեր պատանուոյս խնամօքն Աստուծոյ առդիպեալ ի 1808 եւ ի դեկտ. 20, յորում ժամանակի ի Զմիւռնիայ գասատու գտանի քաջիմաստ Վանեցի Տէր Եօհան, աշակերտեալն ի Գոլիս Տէր Մեսրոպ Տէր Եարութիւնեանի, եւ ի զարգանալ Մուր մանկանս ի տան ծնողի իւրոյ հայրենի երկրին ընդ ձեռամբ յիշեալ Տէր Եօհանին, նախապատրաստի գեղեցիկ գրավարժութեամբ քերականական արհեստի, հարստասանութեան, տրամարանութեան, եւ թուարանութեան քաջ ծանօթութեամբ, եւ եկեղեցական Տարից հմտութեամբ, կամք լինի սմա քաղաւ մեայ ասել սին աշխարհիս, եւ խնդրէ ըստ ներքինւոյն, զոր Առաջնորդ, զի ցուցցէ

\*) Տես «Արարատ» 1917 թ. Յունուար եւ Եպիտիմիոս ամիսները:

Նմա զճանապարհ կուսակրօն շաւղաց: Բայց տարարողդ զխառնածով ընդ յառաջ լինի սմա նուիրակն էջմիածնի Տփխիսեցի Սաեփաննոս եպիսկոպոս Ենօքեան, յուս ցուցանելով՝ թէ Աթոռն է իբր Աթէն պարագրօղ ամենայն զխառնեանց ևս և Առաքինութեանց: Ի 1825 ամի 17 տարւոյ իւր հասակի:

Մտօղք սորին հազար հինգ հարիւր կուտուշ ևս տան յիշեալ եպիսկոպոսին զի պիտոյացուցէ մանկանն ի հարկաւոր կարիս հանդերձից և անկողնոց ի մէջ Աթոռոյն: Թողումք զայն, որ խրատառու գրամատու եպիսկոպոսն զհայրենի աւանդն միւս անգամ չի կցոյց մանկանն:

Նաև ի մտանելն իւր ի փափաքելին ի Սուրբ յԱթոռն Աթենասարաս, յոչ ումեքէ խնամարկեալ և յոչ ի պատրիշ եպիսկոպոսէ հարցաքննեալ ուսման և զխառնեան անունն խօսօղ զոք անդ չի գտեալ: Եւ Տէրութեանց պատերազմ ի վերայ հասեալ ի 1827 թուին ցրուին Աթոռայինքն, վասնորոյ այս Մսուր պատանի վերագործեալ հասանի ի Յակն քաղաք առ աղգային իւր Յօհաննէս եպիսկոպոս յԱռաջնորդ տեղւոյն, մինչ ի տիրել ուսաց յերկրին Հայաստանեայց: Եւ ըստ յառաջին ամուլ առաջադրութեամբ իւրով ի 1828 ամին զայ միւս անգամ յէջմիածին, և չի ևս մարդասիրեալ մնայ անխնամք:

Մինօթական կառավարութիւնն կարօտ գրագրի, ընդ հակառակն կամաց և յուսոյն, ամսական վարձով տոնեն զսա գրագիր և սա կամաւ յանձն տոնու զմշակութիւնն զայն յընթացս երկուց ամաց, թերևս զոք ի կարողաց արկցէ ի գութ և ի պաշտպանութիւն իւր: Միայն խիլա(յ)եցեալ կայր ի դասն յօդոյն, կարօտ առողջութեան՝ յարաշարժ տկարութեամբ անցուցանէր զցանկալի կեանս իւր: Հուսկ ապա և վասն հարկաւոր գրագրութեան նորընտիր Հայրապետն բերէ ընդ իւր ի Տփխիս՝ երբ չի ունէր զայլ գրագիր, սիրելի որդի կոչէր լիարերան, երբ խորհրդական գրութիւնքն աւարտեցան, ևս մեաց անխնամ:

Եւ մեզ որ յատկացեալ էր շինել Սէտասպատու Սուրբ Սարգիս ուխտատեղին, ընկալաք զսա առ մեզ ի 1831 և ի 6-էն սեպտեմբերի մինչև ի 1833 յօդ. 12, իբր որդի և եղբայր ցաւակցութեամբ իրերաց մխիթարէաք զիրեարս, և սա ըստ աստուածատուր շնորհացն յիւրմէ յօրինեալ Բրիտաննէականաւ և Պատմութեամբ դասասաց եղև Տփխիսու վարժարանի մերազն մանկանց:

Բայց ըստ խոհական դատողութեանն, որ ըստ օրէ կշռողադէր Տփխիսու հօգևոր կառավարչաց Մինաս եպիսկոպոսի և Սաեփան Արղութովի զարտուղի կիրան որպէս առ մեզ, նոյնպէս և առ ինքն, վասնորոյ կամէր հեռանալ անդի, որպէս և եղևն իսկ:

Սակայն ըստ օրինակի Ալէքսիանոսի կամաւոր աղքատացելոյն,

յաւերժական յիշատակաց զիբ մի գրեալ, զանխուլ թողեալ ի սե-  
նեակ իմ և այնպէս մեկնեալ յինէն, որ ունի զայս օրինակ,  
.....\*)

\*) Դժբազգարար այդ յաւերժական յիշատակաց զիբօք լկայ մե-  
ռազօրս մէջ, որովհետեւ կտրուած հանուած է միջից, ինչպէս այդ երե-  
ւում է Մանուէլ վարդապետի տետրի Քուահամարից պատմութեան ըն-  
թացքն աւարտում է 416 էջով, իսկ հետեւեալ գլուխն սկսում է էջ  
419-ից: Հետեւաբար այդ կտրուածը մոռացութեան արգիւնք չէ տարեգիր-  
յիշատակագրոցի կողմից, այլ յետին մտքի գործ:— Աւերի այդ գործը նոր  
ժամանակի գործ չէ, որովհետեւ «Պատմութեան» գլխակարգութեան համարը  
ղեղ մի այլ մեք այդ բացը լնկատելով՝ նախորդ գլուխը 44 նշանակելով,  
հետեւեալ գլուխը գնում է 42 համարի տակ:— Պատմութեանս այս բացը,  
բարեբազարար, գտնում է Մ. ԱՅոռիս մի այլ մեռագրի մէջ, նոյն  
Մանուէլ վարդապետի մեքով գրուած իբ «Պատմութեան» մէջ, որ այժմ  
Մ. ԱՅոռի միւս բոլոր մեռագրերի հետ Մոսկուա է փոխադրուած:

Այդ մեռագրի արտադրութեան արտատպութիւնն է արժ. Տ. Գիւտ  
ա. րհյ. Ազանեանի ջանքերով հրատարակուող «Դիւան Հայոց պատմու-  
թեան» վաւերագրերի մտղովածուի ժ. հատորի մէջ հրատարակուած  
«Անձնական Պատմութիւն Մանուէլ Կիւմրիւցիսանացի վարդապետի  
Ալբուկուի կամ Շահինուլի» գործը:

Օգտուելով հ, Գիւտ ա. քահանայի որբայիբ աջակցութիւնից, որ մեր  
գրամատրութեան տակ է գրած իբ հրատարակելիք գործի այդ մասը,  
արտադրելով՝ տալիս ենք մեռագրիս այդ բացը, կանխադոյն շնորհակալու-  
թիւն յայտնելով իրեն այս մասին:

Տիբայր ծ. վարդ.

«Դերասպատի..... Մանուէլ ծայրագոյն վարդապետ  
Բաղմերախա Հայր իմ հողեր,

«Ժամ ինձ ահա, ոչ որպէս յերեկն և յեռանդն յօղածայն  
լեզուախօսութեամբ, զառ ի սրտէ խորհրդոցն խորս մերկանալ,  
զթոթովապէս լեզուիս թերութիւն՝ միջնորդաւ գրչութեանս լնուլ:  
Մտուր մի աղքատին թողեալ ի բազմաց ընդ ձերովդ միայն  
հայրագութ պաշտպանողութեան յարկաւ պարածածկեցաւ: Ո՞վ  
կանխասահման տնօրէնութեան էմանուէլին, քանի՞ քաղցրահայեաց  
գտան յիս ձեր աչք՝ հայր ամենապատուական՝ քանի՞ զգուալիբ  
գորովանօք խնամարկել հաճեցայք զիմ անարժանութիւն ցայսօր  
ժամանակի, միթէ տրիտուր ինչ էր ձեզ առ յինէն ակնկալել,  
քաւ, ոչ երբէք. զի՞նչ ուրեմն, այդ իսկ էր անշուշտ զաւետարա-  
նականին զհետ երթալ վարդապետութեան, որովհետեւ արարէք

### Վասն Ալամդարովի ամուսնացն:

Իբրև դարձան յերկրորդ ընտրութեանց յԱթոսոյն ի Տփլիս, խորհրդով Սերովբէ եպիսկոպոսի, և Յակոբ Զրպետեանի, կամ եղև նոր ընտիր վեհիս, գծարութիւն վարդապետ Ալամդարեանն, որ միանգամ աքտորեալ կայր ի վանս Հաղրատու, վասն լինելոյ նորա

միում յեղբարցս աշտոցիկ, ինձ արարէք: Թոստովանիմ Տէր բարերար առաջի մարդկան և մարդացելոյն վասն իմ Աստուծոյ, ոչ այնպէս գգուեցայ ես ի մօրէ, որպէս ի Հօրէդ բարեգթութենէ, ոչ այնքան կախն ի ստեանց մօրս որքան միտթարութիւն առ ի ձէնջ յողիս դիել գօրեցի, ոչ այնպէս ամփոփեաց զիմ տկարութիւն յուրում ծոցի գահն Արարատեան, որպէս առ ի ձէնջ վասն իմ հանդերձեալ լայն անձուկն մենարան խցիկ ցանկալի:

Այն, մեծ եղևն միանգամայն և անվնարելի՝ բայց և անսոսանալի, ձերում առ իս դերմարդկային բարեաց երախտիք, զորս մտանալ է մտանալ զԱստուած ամենարարի: Սէրն՝ գութն՝ խնամքն Հայրական, զորս ցուցիք ինձ յիւրաքանչիւր դէպս, ցյեալին շունչ կենացս պարտաւորեն աղօթող լինիլ վասն երկարութեան արդիւնավաստակ կենաց ձերոց, և խնդրել դյաւխանեական բարեացն փոխարինութիւն յայնմանէ՝ որ արբուցանողին իակ բաժակ մի Զուր ցուրտ՝ խոստացաւ ոչ կորուսանել զվարձս: Նա է որ աղաղակէ՝ բողջեալ էի և կտուք ինձ ուտել, ծարաւ՝ և արբուցիք, մերկ՝ և զգեցուցիք: (Մատթ. ԻԵ, 35):

Կացցէ մնացէ այս արձան յիշատակի երախտապարտութեան իմոյ առ Տէրդ ի ժամս և ի ժամանակս: Լեզու իմ ծանրաշարժ, այլ՝ ոչ և զրիչս, զի նման է լեզուի հարտար խօսողի, որպէս և մարդարէին լեզու զրչի արագագիր գպրի:

Կացէք բարեաւ, մնացէք խաղաղութեամբ, Հայր իմ Հայր երախտաշատ հանդերձ եղելովքն ընդ ձեզ եղբարքք և որդւովք:

Ողջոյն Առաքելոյ Արարատեան Սիրելի եղբօր ի Տէր: Նոյն և Յակոբայ և Սարգսի վաստակաւոր սիրելեաց՝ որոց վարձս բարեաց՝ պարգևեացի ի պարգևողէն ամենայն բարեաց: Ես եմ յողներախտ Հայրութեան ձերում նուսատ ծառայ և յետին որդեակ՝

Մսուր գպիր Գրիգորեան Զմիռնացի:

ի 12 օգոստոսի,  
1833 ի Տփլիս:

Թողում ի հանապարհէ երկիցս զրեցեալան, նաև ի նախիջեանու հետ զհետայն ուրանոր սկիզբն արարեալ ընթեռնուլ՝ զրել և թարգմանել ի ուսաց ի մեր բարբառ, և ցարդ երկու տետրակս նախախայծ արդասեաց աշխատատէր կենացն ի միտթարութիւն

յատենագրիք ներսէս Արքեպիսկոպոսի, և ևս վերատին հանել ի  
Հաղրատու, որ մերձ է Տփլիսու, աքսորել յէջմիածին ի վանս  
Սրբոյն Գայիանիայ, զի մի ոք ունիցի ընդ նմա գրութիւն և բան:

Ըստ որում անուամբ ահաւորին առեալ էր զմեզ ընդ իւր  
այս վեհ, և մեք նոյն ահաւորի անուամբ հնազանդ ծառայեալ  
նմա յանձ առեալ էաք, ի նշանաց և ի պարագայիցն խորհելով  
մեր թէ վախճան աշապիսի կողմնակալութեանց ոչ բարւոք եղերի,  
որպէս փորձիւ գիտէաք զ՛Դանիէլի և զ՛Դաւթի ժամանակաց կող-  
մնակալութեանց զանօգտակար յարուցմունսն, վասնորոյ համա-  
ռօտ գրութեամբ զհաւատարմութիւն իմ ծանուցի աշապէս:

«Զերդ բարձր Սրբազնութիւն, Ողորմած Տէր, Ի ներկայս  
եղայս ծանօթութիւն ամենախոնարհարար խնդրեմ ընկալնուլ առ  
եշապայս յիշատակ: Ոչ է անյայտ Տէրութեանդ, եթէ Հայրապե-  
տական դարձուածք ուրէք երբէք չունի զնուատութիւն իմ  
«խորհրդակից, այլ խորհրդալուր: Նոյնպէս և ոչ խորհրդատու,  
եսակայն խորհրդապահ: Եւ սակս Հայրապետական ինամոցդ, որ  
եսա իս, պարաւանդի անձն իմ ամենայն ակնարկութեանց Տեառնդ  
«հարազատ ծառայութեամբ պարտազերծ գտ[ա]նիլ: Ընդ որս և  
«շաղագս ազգակցական ցաւակցութեանց զայն տկար խորհուրդ  
«իմ ոչ կարծեմ գաղել ի բարերար Տեառնդ, այսինքն, շնաւատալ  
«ամենայն հոգւոյ և անմտաց պահել յիշողութեան զանցս Դա-  
«ւիթի և Դաւթի, ուր թէ նոքա երկու գլուխք էին, իսկ այժ-  
«մեանս եռանկիւնիք, և առաջինն անուաւոր անդադար հորովա-  
«կան, յաշապիսիս կատարեալ զգուշութիւնն ապահով առնել և  
«համայն գործառնութեանց բարձր Սրբազնութեանդ առերէ  
«զրարի վախճան, առ որ մեամ ամենանուստա ծառայ Մանուէլ  
«վարդապետ:

«Ի 1831, ի մայիսի 28.

«Յառաջնորդարանն Տփլիսու Հայոց:»

հոգւոյ մերոյ մերում, առաքեալ՝ խոստանայ զամբողջութեան հա-  
ղորդս առնել և զմեզ յայս նոյեմբերի 13 գրեցելովն:

Արդ յայտունակ հաւատարիմ երախտազէտ բարեկամէ առեմ,  
և յորդւոյ՝ անախորժ աշաղկութիւնք հոգեորական կառավարչացն  
Տփլիսոյս՝ մեկնեալ բաժանեցին զանայցելու ծերունիս զիս, թէ և  
մարդասիրութեամբ վերին այցելութեանց և զայս ըստ հոգւոյ  
ձնեալ եմք զորդիս յայլ և այլ տեղիս և քաղաքս, բայց սն էք  
ընտրեալն ի բազմաց միակ սիրելի աղաւնին իմ, որոյ զձայնն,  
չնորհիւ Մեծին Մեարտապայ միջնորդաւ զըջի լսելոյ կարօտ արա-  
րին՝ որք արարինն:

«Դիւան», ԺԲ. էջ 173—175.

Թուի թէ առ ժամե այնմիկ ծանր էր իշխանաւոր լսելեաց. առնուլ զխորհուրդ ի սա[ռ]րազրելոց, Բայց փորձն զկնի որոշեաց անօգտարար. վասնզի Ներսէս եպիսկոպոս նախահոգաց եղեալ զԱլլամտարովէ, ինդրեալ էր ի Կայսերէ առաքել առ ինքն, և կայսրն մինիսորիւ հրամայեալ ի Տփիսիս ենարալ Բազրատեի, որ էր յայնժամ տեղակալ գրաֆ Պասկեիչի, առաքել զՅարութիւն վարդապետ Ալլամտարով և զՄիսէօն եպիսկոպոսն Բզնունեան ի Քիչնե առ Ներսէս Արքեպիսկոպոս:

Աւ ի գրել նոր ընտիր Վեհիս առ նոյն ենարալ Բազրատիօն, թէ զԱլլամտարովն արքունի պահակօք առաքել յԷջմիածին, յերկրորդի աւուրն ընկալաւ զպատասխանի, թէ ոչ կարեմ զկամա քո կատարել, զի բարձրագոյն հրաման ընկալեալ եմ առաքել զնա ի Քիչնե առ Ներսէս Արքեպիսկոպոսն: Ահա առաջին պատու Հայրապետութեան նորա:

### Կայսերական շնորհ Հայրապետաց և Օծուփիւն.

Թէպէտ ի 1831 յունիսի 30 ստորագրեցաւ ի Սուրբ Կայսերէ հաստատութիւն Հայրապետութեան նոր ընտիր Յօհաննէս Կաթուղիկոսի, սակայն ընծայք և հրովարտակքն հազիւ ի յօգոստոս ամսոյն հասին ի Տփիսիս. որք էին Անդրէի Առաքելոյ կապուտ լինիլի կալալէր առ հրաժարեալ եփրեմ Հայրապետն, որ այս սկիզբն է առ Հոգևորականն մեր: Ալէքսանդրսկի առաջին աստիճան կաւալէր առ նորընտիր Յօհաննէս Հայրապետն, և Աննայի առաջին Աստիճան երկու կալալէրք մինն Տեղապահ Մարտիրոս եպիսկոպոսի, որ ոչ կարաց կրել, զի վախճանեալ էր, և երկրորդն Կարնեցի Սերովբէ եպիսկոպոսին, որ խարդաւիրական էր ամենայն դարձուածոցն: Աւ վեց հազար մանէթ հանապարհի և օծութեան ծախուց գումար շնորհեցաւ, և Բարձրագոյն հրաման առ փոխանորդ կուսակալի ենարալ Բազրատեն որ հանդիսադիր լիցի Օծութեանն մեծաշուք փառօք, այսպիսի յարգութեամբ: Ի 1831 և ի սեպտ 6 ելեալ ի Տփիսիսու գիմեալ զնայ ի Սուրբ Աթոսն:

### Նախընթաց նշանք Օծուփեան Հայրապետի:

Ըստ նշանակեալ հանդամանաց մեծաշուք հանդիսի ի 1831 ի նոյեմբերի 8 եղև Օծութիւն նոր ընտիր Կարբեցի Յօհաննէս Հայրապետիս: հանդերձ հետեւեալ պատահմամբք:

Անթափանձելի է ինձ գուշակութիւնք պատահմանցս որք ի մէջ երկուց եօթնեկաց, մի զկնի միոյ եղևն, արդեօք ըստ ախորժակաց Վեհիս, զի կուտակեալք նոցին, անաշխատ ի գանձարանս

իւր ժողովեցին, թէ մարգարէութեան բացան գրունք, պակասութեամբ արանց խորհրդականաց ձերոց և իմաստնոց:

Քանզի ի մտանել Վեհիս յԱթոն, քաղցրաբարոյ ուսուցեալն Ստեփաննոս Արքեպիսկոպոս Իզմիրցի կոչեցեալն, Հոգևոր հայր սորին տեղապահ Մարտիրոս Արքեպիսկոպոս իբր ի կաթողիկոսութիւն ընտրեալն, ժամօրհնոց Փիլիպպոս եպիսկոպոսն և ժամասաց Մասթէոս եպիսկոպոս, սոքա շորեքին յայնմ շարաթոջ մի զկնի միոյ վախճանին: Ի յՕժման շարաթուն Կեղամեան Ստեփաննոս Արքեպիսկոպոսն, իւր սպասաւոր Սահակ սարկաւազն, քերվան պաշր Յօհաննէս վարդապետն, և Տաժօ ասացեալ Յօհաննէս վարդապետն Պակագիտեցի, այս շորեքին մասաղ իւր օժման շարաթուն մեռեալք: Մինօղի անդամ Սահակ եպիսկոպոս Դարբինեան, Սարգիս եպիսկոպոս Գործակալ, սիրելին մեր և բազմաց հարտար գրագիր Դիոնէսիոս վարդապետն և բժիշկ Մինաս վարդապետն, յերկրորդի շարաթի օժմանն, խորհրդական թուով երկուտասանք համանդամայն պակասեցան յԱթոսոյն, կայք և կարասիք սոցա, ընդ 105 երեան<sup>2</sup>) գրելոց մտին ի գանձարան Վեհապետիս, ողջունելով զշնորհարեր գալուստ նորա:

Բայց մեք ողորմութեամբն Աստուծոյ ապառ գտեալք յայս շնորհաց, լսելով զհամբաւ հանդիսաւոր Օծութեանն, գրեցաք շնորհաւորութեան նամակ գայս օրինակ:

### Օրինակ շնորհաւորութեան գրոյս.

«Բարձրագոյն բարեհաճութեամբ հաստատեալ Տեառն Յօհաննէս Կաթողիկոսի Շնորհարաշխ Աջոյն խոնարհ համբոյր:

«Ըստ անստերիւր Տէրութեանն, ի Մարկոսի ԺԱ, 24 և 1 Յօհանն. Գ. 20 վճռոյն, հրապարակեալ հնչեաց աւետարանութիւն, ի շնոյեմբեր ամսոյս 8-ն, եղեալ լրութեան հնոյն և սկզբան նորոյդ եղեկաւարութիւն լուսաւորչակրօն Մերազն Սուրբ եկեղեցւոյ, որ յերախտապարտութեամբ իմով առ տիպա քաջ Հովուապետին և բեկուն ազգասիրութիւնն, որ առ իս, վստահութիւն գրչիս շնորհելով, յիշեցուցանէ այսու, թէ գերպանձ էակք յաշխարհի ունին զսկիզբն ի շորից տարերց. մանաւանդ ի թանձրատաղդին հողոյ, զոյսացեալք արծաթ, ոսկի և գոհարք թագաւորաւա[յ]ելք, ի բաց թողեալ գերկաթ, գաղինձ, զգանազ, զկապար գարոյր և գայլս, որք զիւրազիւտք առ ամենեւեանս յամենայն ուրիշ:

«Նոյնպէս ի հաճութենէ առն և կնոջ, կամ ի մարմնոյ և յարենէ մարդկան [ան]հունք, բայց զայր հաւատարիմ տանն Աստուծոյ գործ է գտանել, թէ ի հոգևորս և թէ ի մարմնաւորս. որպէս

\* Տես տպագրածիս էջ 95—96.

«Տեարք, իշխանք և թագաւորք բազումք, իսկ տօնելիք՝ յայանի  
 «թուովք: Ամին հանգոյն ի Սուրբ Լուսաւորչէ ցարդ ի տասն և ի  
 «չորս հայոց կաթուղիկոսարանսն գաւաղանաւ միոյ գծի, բացատ  
 «ի Գանձասարու և յԱղթամարայ պիտակաց՝ հարիւր երեսուն և  
 «երններորդն Տէրդ մեր հաշուի, բայց շարունակողքն ի Սուրբ Էջ-  
 «միածին, ձեօք՝ յիսուն և հինգ վերապատուին: Յայս երկրորդ  
 «կարգէ՝ հազիւ երեքն ազգային լուսաւորութեանց, և երեքն Աթո-  
 «ւոսյ պայծառութեան գտանին ի հայրենապատուման ջանադիրք և  
 «ի մահուն անմահացեալք:

«Ամին իրի ըստ վերտանեալ երախտապարտութեանս ցանկայ  
 «հայրենասիրութիւն իմ զգալ, տեսանել, լսել, դասել, հաշուել և  
 «թուել ընդ սակաւուցն, որք կոխան առին զմահ, ի քէն յառա-  
 «ջաշարժ ազգօգուտ արգասեօք, առ որ որպէս ի մօտոյ, նոյնպէս և  
 «ի բացուստ կամ և մեամ նուաստագոյն ծառայ, Մանուէլ վար-  
 «եղապետ:

«ի 1831, նոյ. 21

«յանց Սէ[յի]տապատու ի Սուրբ Սարգիս,  
 «որ ի Տփլիսս:

(Նարունակելի)